# Վերնաշեն

Բնակչության թիվը՝ 1323

Վերնաշենի համայնքը գտնվում է Վայոց Ձորի մարզի հյուսիս արևելյան հատվածում։ Հեռավորությունը մարզկենտրոնից 5կմ է, մայրաքաղաքից՝ 125 կմ։ Սամանակից է
Գլաձոր, Մալիշկա, Գողթանիկ համայնքներին։ Բարձրությունը ծովի մակարդակից 1450մ է։
Գյուղի նախկին անվանումը եղել է Սրկողովք։ Վերնաշեն գյուղը հիմնադրվել է 1829թվականին։ Գյուղի բնակիչների նախնիները եկել են Սալմաստ գավառից։
Այժմ գյուղն ունի 1329բնակիչ։ Տնային տնտեսությունների թիվը՝ 536։ Բնակիչների հիմնական զբաղմունքը՝ խաղողագործություն, հողագործություն, անասնապահություն։
Համայնքի ընդհանուր տարածքը 5323հա է։ Համայնքն ունի խաղողի և պտղատու այգիներ։ Բնակելի տների թիվը ՝ 341։
Համայնքի տարածքով անցնում է Սրկողունք գետը։
Համայնքն ունի պատմամշակութային եկեղեցիներ։ Համայնքի հյուսիսային մասում գտնվում է Սպիտակավոր վանքը, Պռոշաբերդը, հյուսիս-արևելյան մասում գտնվում է Թանադե վանքը, Արկազի Սուրբ խաչ վանքը, որը եղել է Վայոց ձորի նշանավոր ուխտատեղի։ Համայնքում է գտնվում Գլաձորի համալսարանի թանգարանը։
Համայնքն ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, կուլտուրայի տուն և փոստային բաժանմունք։